ՆՈՐ-ԴԱՐ

№ 24 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 20 փետրվարի **1886** Հինգշաբթի 20 փետրվարի ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 24

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է **1886** ԹՈՒԱԿԱՆԻՆ

Նոյն ծրագրով և ուղղութեամբ
(Երրորդ տարի)

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.
Եւրոպայի և Թիւրքիայի բաժանորդները վճարում են 30 ֆրանկ:
Ուսանողները վճարում են՝ 10 րուբլի:
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից:
Թիֆլիսում բաժանորդ են գրվում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը:

Խմբագրատունը գտնվում է պօստատան եաևը, Տրօյիցկիյ փողոցի վերայ, Սամբօ (Տրօյցա) եկեղեցու հանդէպ, տուն № 9:

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Թրքախօս կաթոլիկ հայերի առթիւ:

Քրօնիկոն.—Լուրեր։ Գիւղական-բժշկական օգնութիւնը։ Դերբէնդի այգեգործութիւնը Գ.

Քաղաքական.—Լուրեր։

Խառն Լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրներ։

Բանասիրական. — Արշաւանք դէպի պատմութեան խորքերը։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 19 փետրվարի 1886.

ԹՐՔԱԽՕՍ ԿԱԹՕԼԻԿ ՀԱՅԵՐԻ ԱՌԹԻՒ

Նախընթաց համարներից մէկում («Նոր-Դար» № 20) հրատարակեցինք մեր հայ կաթոլիկ թղթակցի Ախալքալաքից գրած թղթակցութիւնը։ Մեր թղթակիցը խօսում է Ախալքալաքի շրջակայքում հայ կաթոլիկաբնակ Պաւեայ, Խուրկումայ և Կարտիկամ երեք գիւղերի վերայ։ Մենք իմանում ենք, որ այդ երեք գիւղերի բնակիչները գաղթել են 1829-ին Արդահանի մօտ գտնուած Վէլ գիւղից, դաւանում են կաթոլիկ կրօնը և խօսում են թիւրքերէն։

Թէ ինչպէս է պատահել, որ այդ գիւղերի հայերը կաթոլիկ կրօնն են դաւանում և խօսում են թիւրքերէն, այդ մասին մեր թղթակիցը հետևեալ բացատրութիւնն է տալիս.

«Աւանդութիւնը ասում է, որ սկզբում դրանք դաւանելիս են եղել Լուսաւորչի կրօնը և գաղթած լինելով մի Վարդան անունով հարուստ իշխանի հետ Ղարսի կողմերից, ընտրել են իրենց բնակութեան տեղը Վէլի սահմանը։ Իսկ այս կողմի մահմեդական տարրը աւելի մոլեռանդ, կրօնամոլ և աւելի բարբարոս լինելով, չատ չարչարելիս է եղել այս մի բուռն քրիստոնեայ հայերին։ Բայց երբ չի յաջողուել սրանց կրօնափոխ անել, մահմեդականները բռնել են սրանց առաջնորդ իշխան Վարդանին և կարմրացրած մի պղնձէ թաս են անցկացրել գլխին, որը իւր մօտահաս մահուան երկիւղից արտաքուստ ուրանալով իւր կրօնը ազատուել է այդ տանջանքից, միայն նրա գլխի մազերը թափուած մնալով նրան այնուհետև կանչելիս են եղել — քեալ-Վարդան։ Այդ միջոցներում Վէլի կողմը լոյս են ընկել [illegible] միսիոնար եզուիտներ, որոնք մեծ ձայն ունէին Թիւրք կառավարութեան առաջ և որոնց շնորհիւ մնացեալ քրիստոնեայ հայերը ընդունում են կաթոլիկ կրօնը, նրա պաշտպանութեան տակ ազատ քրիստոնեայ լինելու նըպատակով, և մինչև օրս էլ դրանք մնացել են հայ կաթոլիկ»։

Այդ գիւղացիների անցեալից աւանդութիւնը մէջ բերելուց յետոյ, մեր թղթակիցը դրանց հայ ծագումից լինելը ապացուցանելու համար մէջ է բերում ի միջի այլոց օրինակներ դրանց գործածած բառերից, որոնք զուտ հայերէն են, ինչպէս և մականունները։

Մեր թղթակիցը մտնելով այդ գիւղացիների կեանքի մէջ, տեսել է որ ծերերը հայերէն են խօսում և աղօթում, ընտանեկան կեանքը հայկական է, եկեղեցիներում բացի քարոզից ժամասացութիւնը կատարվում է հայերէն լեզուով։

Ի՞նչու է աշխատում մեր թղթակիցը ապացուցանելու, որ Ախալքալաքի շրջակայքում գտնուող հայ-կաթոլիկաբնակ գիւղերի բնակիչները հայեր են։ Սրա վերայ արժէր ուշք դարձնել։ Մի վրացի թղթակից այդ կողմերը ճանապարհորդելով գերեզմանաքարերի վերայ վրացերէն տառեր է գտել փորագրած, և այդ հիմանց վերայ պնդում է, որ վերոյիշեալ երեք գիւղերի բնակիչները վրացի-կաթոլիկներ են, այսինքն ազգով վրացի են։ Երբ 1883-ին Ախալցխայում մի եկեղեցւոյ համար վէճ էր բացուել, դրանից ծագեց վրացախօս և հայախօս կաթոլիկների խնդիրը, այսինքն այն կաթոլիկներին, որոնք ծագումով հայ են, բայց վրացերէն են խօսում, կամեցան ազգով վրացի հաշուել։

Որքան յիշում ենք ինքը հայ-կաթոլիկ հոգևոր կառավարութիւնը աշխատում էր այդ պառակտումն ձգել կաթոլիկ հայերի մէջ, թէպէտև յայտնի է, ինչպէս մեր թղթակիցն էլ պնդում է, որ Կովկասում վրացի կաթոլիկ չը կայ, գոնէ վրացի կաթոլիկ համայնք օրէնքի առաջ էլ գոյութիւն չէ ունեցել և չունի։

Մեր թղթակցի ասելովը, երբ հայ կաթոլիկների բանիմաց մասը պնդում է եղել, որ իսկապէս վրացի կաթոլիկ հայ համայնք գոյութիւն չունի Կովկասում, հայ-կաթոլիկների հոգևոր կառավարութիւնը գրաւոր յայտնել է, որ Կովկասում ոչ թէ միայն վրացի կաթոլիկներ կան, այլ և ազգով Եւրոպ. կաթոլիկներ էլ կան, մատնացոյց լինելով վերը յիշած երեք գիւղերի վերայ։

Բանիմաց ընթերցողի ուշադրութեանը յանձնելով մեր կեանքի մէջ այս երևոյթները, մենք կը կամենայինք մի քանի նկատողութիւններ անել միմիայն դրանց մասին, թողնելով եզրակացութիւն անելը դարձեալ ընթերցողին։

Այդ ամենից երևում է ուրեմն, որ մեր երկրում մի մարդու կամ մի բուռն ժողովրդի մէջ ազգութիւնը գտնելու և որոշելու համար չար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՇԱՒԱՆՔ ԴԷՊԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՔԵՐԸ

(Մոգեստովից)

—

Այս օրերս Եւրոպան մտաբերեց մի սաստիկ տխուր անցք իւր պատմութիւնից. 1685 թուի հոկտեմբերի 18-ին Լուդովիկոս XIV-ը իւր ստորագրութեամբ ոչնչացրեց Նանդի հրովարտակը, որի հիման վերայ ֆրանսիական բողոքականները 1598-ից սկսած խղճի ազատութիւնն էին վայելում. իսկ նոյն հոկտեմբերի 22-ին Պարիզի պարլամենտը թագաւորական այդ նոր կարգադրութիւնը ընդունեց ֆրանսիական միապետութեան օրէնքների շարքը իբրև նոր օրէնք։ Ուրեմն անցեալ ամսին *) լրացաւ այդ անցքի ուղիղ երկու հարիւր տարին, որին մի անգամ ևս մտաբերեց Եւրոպան։

Եւրոպան մտաբերեց այն, —սակայն զարհուրմամբ և սարսափմամբ, երկու երկար դարեր անցան վերոյիշեալ անցքից, սակայն այդ զարհուրելի, հակամարդկային բռնութեան տեսարանները, որոնք գործ էին դրվում հարիւր հազարաւոր մարդկանց խղճի, պատուի և կեանքի վերայ, առանց խղճալու նրանց հասակին, սեռին և կարողութեանը, դարձեալ մտաբերելիս ցընցում են մարդուս ներդերը և ապշեցնում են երևակայութիւնը։ Ապշեցնում են առաւելապէս և նրա համար, որ այդ անցքերը պատահեցին ոչ թէ մի որև է Թիւրքիայում, Պարսկաստանում, Բուխարայում, այլ աշխարհիս ամենալուսաւորեալ մասում, ուր փայլում էր ծաղկեալ գրականութիւնը, յառաջադիմում էր գիտութիւնը ու փիլիսոփայութիւնը և ուր ծաղկում էր Րասինի, Մոլիէրի, Դեկարտի, Բէլլի, Բուալօյի, Լաբրիւէրի, Բօսիւէտի և Ֆենէլօնի դարը։ Այս սարսափահար տեսարանների տպաւորութիւնները աւելի զգալի են լինում մանաւանդ այն ժամանակ, երբ մտաբերում ենք, որ այդ արհաւիրքները անցել են մի խաղաղասէր, աշխատասէր, խիստ բարոյական ժողովրդի գլխովը, որոնք հպատակել են ամեն մի տիրապետողի ինչպէս մի Աստուածային Նախասահմանութեանը, որոնք գոնէ ինչպէս մի ապրելու տարրական իրաւունք ունեցող ժողովուրդ կարծել են, որ իրենք պաշտպանուած են ինչպէս սովորական օրէնքներով, նոյնպէս և օրէնսդրական վճիռներով։ Մարդուս մազերը փշաքաղվում են, երբ լսում ես այդ անցքերին ժամանակակից անձանց հառաչանքները և կարդում ես նոր պատմաբանների այդ կրօնական հալածմանց նկարագիրները, որի մօտ մինչև անգամ քրիստոնէութեան առաջին դարերի սարսափելի հալածանքները մի անզօրն բան են երևում։ Ցաւալի քան Նանդի հրովարտակի ոչնչացնելը, որի հիման վերայ բոլոր բողոքականները ազատ դաւանում էին իրենց կրօնը, նրանց (բողոքականներին) բոլորին արտաքսեցին հասարակական պաշտօններից, զրկեցին ատրճանններից և ռոճիկներից, այնուհետև արգելվում էր նրանց լինել փաստաբան, նոտար, մասնագէտներ (էքսպերտ), դեղավաճառ, բժիշկ, տպագրագէտ, գրավաճառ, իսկ նրանց կանանցից և աղջկերանցից խլեցին մանկաբարձ լինելու իրաւունքը, մինչև անգամ իգական սեռին արգելում էին ասեղնագործել և վերջապէս վաճառականութեան, արդիւնաբերութեան ասպարիզում որքան կարելի է արանց և կանանց իրաւունքները սահմանափակում էին և այդ բոլորը կատարվում էր նրա համար, որ բոլոր Ֆրանսիացիքը պէտք է դաւանէին «թագաւորի հաւատը»։ Այս բարբառոսական միջոցներով էլ չը բաւականանալով ատրճանաւորները փակում էին կամ աւերում բողոքականների հարիւրաւոր եկեղեցիները, իսկ եկեղեցապատկան ինչքերը բաժանում էին դատարկաձեռն աղնուականներին։ Եւ երբ եկեղեցիները մեծ քանակութեամբ աւերակ դարձան ու թեմերը մնացին առանց եկեղեցիների և քահանաների, հրաման դուրս եկաւ թէ՝ այն երեխան որը քսան ու չորս ժամուան ընթացքում մկրտուած չի լինի, նա ենթարկվում է կաթոլիկ աւազանի մկրտութեան ծէսերին և ահա, օգտուելով այդ հրամանից, այնուհետև առանց քաշուելու առևանգում էին երեխաներին մայրերի գրկից, որև պատճառ էին դառնում ամենամեղսային, ամարդի տեսարանների։ Միևնոյն ժամանակ թագաւորի ինտենդանտները ի հաճոյս մոլեռանդ կաթոլիկների և Մենտոնի (որ մեծ դեր էր խաղում ամբողջ այդ խայտառակ պատմութեան մէջ) մինը միւսի ետևից նոր բռնութիւններ էին նիւթում, որոնցից մէկն էր և ազատել կաթոլիկներին հարկերից և բոլորը բարդել բողոքականների վերայ և գըլխաւորապէս բողոքականների բնակարաններում նշանակում էին զինուորներ, որոնց լիազօր. իրաւունք էր տրվում տանեցիների հետ վարուել այնպէս ինչպէս իրենք կամենում էին։ Այդ հալածանքները առաջին անգամ տեղի ունեցան Պուատու գաւառում 1681 թուին՝ Նանդի հրովարտակը ոչնչացնելուց չորս տարի առաջ, որին հետևեցին և միւս գաւառները։ Ուստի և այս և սրա նման հալածանքներից զրկուած Հուգենոտները սկսեցին գաղթել հայրենիքից, սակայն այն ժամանակ մի նոր օրէնք ևս հրատարակուեցաւ—արգելել Հուգենոտներին Ֆրանսիայի սահմաններից անցնելը։

Բայց այս ամենածանր, անտանելի տառապանքները դեռ ևս այն բոլորի նախերգանքն էր, որը յետևեց Նանդի հրովարտակը ոչնչացնելուց յետոյ 1685 թուին։ Այս նոր օրէնսդրական վճռի հիման վերայ բոլոր բողոքական ծիսակատարութեան յատուկ հրապարակաւ կատարուող կրօնական պարտականութիւնները համարվում էին անվավեր, նրանց բոլոր եկեղեցիները առանց բացառութեան ենթարկվում էին աւերածութեան, բոլոր հոգևորականները բուռն պատիժների և մահուան դատակնիքների տպաւորութեան տակ աքսորվում էին տէրութիւնից, բոլոր նորածին մանուկները պատրաստուած էին կաթոլիկ ծէսերին համեմատ մկրտուել և կրթուել կաթոլիկ դաւանութեան մէջ, բողոքական դաւանութիւնը ընդունող անհատին անպայման արգելուած էր երկրից գաղթել, իսկ այդ որոշումները խանգարողներին սպառնում էր աքսոր դէպի տաժանակիր աշխատանքները և կամ մահու դատակնիքը։

Որքան էլ որ սոսկալի էր նոր օրէնքի որոշումները, սակայն կաթոլիկ հոգևորականութեան, փոխարքաների և ինտենդանտների մէջ կային բազմաթիւ մոլեռանդ եասսէր մարդիկ, որոնց այդ բոլորը մի չնչին բան էր երևում։ Ուստի և հուսկ յետոյ մինիստրը Լուվուայի թոյլտվութեամբ սկըսուեցան այն նշանաւոր իսկական հալածանքները, որը ներկայ դարուս մարդկութիւնը առանց սառսուռ զգալու չէ կարողանում մտաբերել։ Բողոքականին կաթոլիկ դարձնելու համար, նրանց իւրաքանչիւրի տանը նշանակում էին ըստ չափու հարկաւորութեան զինուորներ, որոնք և բռնութեամբ սկսում էին կրօնափոխ առնել տանեցիներին։ «Բողոքականներին գանահարում էին, ծակծկոտում էին, այրում դանդաղ վառուող կրակի վերայ, արմատախիլ էին անում նրանց եղունգները և չարունակ միքանի օր ու գիշեր անքուն էին պահում։ Այն աշխատանք է հարկաւոր, և թէ ազգութիւնը որոշելու համար գործ դըրած միջոցներն են կրօնը և լեզուն։ Այդ ի հարկէ հասկանալի է, մանաւանդ երբ ի նկատի առնենք, որ կրօնը և լեզուն հանած ուրիշ էլ ոչինչ չը կայ, որով մի որևէ ազգութեան գոյութիւնը որոշուէր։ Աւելի պարզ պէտքէ լինի այդ, երբ ասենք, որ պետութիւնը ռուս է, պետական կրօնը՝ ռուսաց կրօնն է և այլըն և այլն։

---

*) Անցեալ 1885-ի հոկտեմբերի մասին է խօսքը։

Մեր այս դրութեան մէջ երբ մի բուռըն ժողովուրդ, օրինակի համար ենք ասում, խօսում լինի թիւրքերէն և դաւանում լինի կաթօլիկ կրօնը—դիւրին բա՞ն է արդեօք ասել թէ այդ ժողովուրդը հայ է, մանաւանդ, որ ինքը այդ ժողովուրդը այդ բանի վերայ չէ մտածում։ Ի նկատի առնենք նոյնպէս մեր երկրում մի ուրիշ ժողովուրդ որ խօսում է լեհերէն կամ վրացերէն բայց դաւանում է կաթօլիկ կրօնը։ Յետոյ ենթադրենք, որ թըրքախօս կաթօլիկները և լեհախօս ու վրացախօս (յայտնի է որ սրանք ամէնքը ծագումով հայ են) կաթօլիկները միմեանց հետ խնամութիւն են հաստատում միմեանցից աղջիկ առնում և տալիս, այն ժամանակ հետաքրքիր կը լինէր իմանալու թէ այդ միութիւնից ծնունդ առած զաւակները ի՞նչ ազգութեան են պատկանում, քանի որ, ինչպէս վերն ասացինք, ազգութիւնը որոշող միջոցները կրօնը և լեզուն են։ Կարծում ենք, որ այդ տեղ աշխատանքը աւելի ծանր պէտքէ լինի և ապարդիւն։ Կարծում ենք, որ այդ տեսակ աշխատութիւնները պէտքէ որ միայն հնագէտներին հետաքրքրէր։

Այս ամէնս և մեր դրութիւնը աչքի առաջ ունենալով հարցնում ենք․ Լուսաւորչի կրօնը դաւանող և հայոց եկեղեցւոյն պատկանող ժողովուրդը իւր ազգութիւնը որոշելու դժուարութեան մէջ կարող է ընկնել։

Միւս կողմից վերը յիշած երեւոյթները իրենց կործանաբեր հետեւանքներով արդեօք չեն ցոյց տալիս թէ ինչ նշանակութիւն ունի և պէտք է ունենայ ազգ․ եկեղեցին հայ ժողովրդի համար։

Արդեօք կամովին ազգ․ եկեղեցին ձեռքից թողնելով և կրօնական պրօպագանդան քաջալերելով, մենք մեր ձեռքովը մեր ժողովուրդը խորխորատ չե՞նք ձգում, որտեղից ոչ թէ սուտ այլ ճշմարիտ մարգարէներն էլ չը պիտի կարողանան երբէք փրկել։

Կեանքի ամենօրեայ փորձերը, մեր առջևը կատարուող դէպքերը լաւ դասեր են, ինչու չենք ուզում տեսնել։

Ս. Ս.

ՔՐՕՆԻԿՈՆ

ՇՈՒՇՈՒՑ․—Փետրվարի 11-ին երեկոյեան ժամը 9-ին Թուրք ղաչաղները՝ մօտ 25 ձիաւոր՝ կամենում են եօթը բեռը առանց մաքս վճարելու ապրանք մտցնել Շուշի։ Ոստիկանութիւնը իրազեկ լինելով այս ղաչաղների մասին յայտնող լրտեսից՝ վաղօրօք հրամայում է պրիստաւ պ. Բալասա-Բէկեանին զգոյշ կենալ և բռնել ղաչաղը, և սա իւր ձիաւոր պահապաններով շրջապատելով Շուշւոյ մօտ գտնուող Հինոտ գիւղի շրջակայքը, որտեղից պիտի գաղտնի ճանապարհով անցնէին ղաչաղները, բռնում է ապրանքը և տանում ամրացնում ջիչեալ գիւղում․ իսկ ղաչաղները հեռանալով այնտեղից՝ քաշվում են անտառների և սարերի խորշերը և այնտեղ հրացանների գնդակներ են արձակում ոստիկանների և սրանց պահապանների վերայ, որպէս զի կարողանան դրանով ազատել իրենց ապրանքը․ սրանք էլ իրենց պաշտպանելու համար հրացանաձգութիւն են անում։ Նոյն միջոցին օգնութիւն է հասնում գաւառապետի օգնականը։ Բարեբաղդաբար սպանութեան մի դէպք անգամ չը պատահելով հանդերձ զրկւում են Ջիբրայելու մաքսատունը բռնուած ապրանքը, որը, ինչպէս ասում են, մօտ 10,000 րուբլու ապրանք է։

—

Նախընթաց համարներից մէկում յայտնեցինք մեզ հաղորդած մի լուր, այն է, որ ս. Սինօդի կարգադրութեամբ երեխաներին մկրտելու ժամանակ պէտք է հայերէն անուն տալ։

Շատ լաւ կարգադրութիւն է, բայց ցանկալի է, որ ս. Սինօդը կարգադրէր նոյնպէս կազմելու հայոց անունների մի ցուցակ։ Այդ ցուցակից տպագրուէր բազմաթիւ օրինակներ և ուղարկուէր հայոց եկեղեցիները, որպէս զի թէ ծնողք, կնքահայր և թէ մկըրտող քահանայ կարողանային այդ անուանացուցակից ընտրել իրենց ցանկացած անունը։

Ինչպէս իմացել ենք այդ սովորութիւնը ընդունուած է Թրքահայերի եկեղեցիներում։

—

Մեզ գրում են․—Փետրվարի 18-ին երեկոյեան 3 ժամին մի ծեր մարդ ազգով լեհացի ինքնասպանութեան փորձ արեց։ Դա գնալով բաղանիք վարձում է մի առանձնեակ 4 ժամ ժամանակով։ Նա ներս է մտնում առանձնեակը և ասում է որ չորս ժամից յետոյ գան և «քիսա» քսեն։ Որոշեալ ժամը լրանալուց յետոյ ներս է մտնում քիսա քսողը և տեսնում է, որ ծեր մարդը բոլորովին ուշաթափ ընկած խռխռացնում է․ վախեցած դուրս է գալիս քիսաչին և կանչում է ընկերոջը։ Վերջինս գալիս է տեսնում է, որ ուշաթափ ընկած ծերի մարմնից յորդ արիւն է հոսում։ Նա իսկոյն զընում է և ոստիկանութեանը իմաց է տալիս այդ անցքի մասին։ Ծերունին կամենալով մեռնել կտրել է դանակով իւր թևի զարկը, որից առաջացել է արիւնհոսութիւն և ուշաթափութիւն։ Երբ նրան ուշքի բերելով ոստիկանութիւնը հարցնում է պատճառը, նա պատմում է որ ծերութեան պատճառով շատ խեղճ է ապրելիս եղել․ նրա ապրուստ հոգացողը իւր աղջիկն է եղել, որը սկսել է անառակութիւն անել, չը նայելով հօր ամեն արգելքներին։ Այլ ևս չը կարողանալով տանել խեղճութիւնը և որդու անբարոյականութեան մէջ ընկնելը, ծերունին կամեցել է վերջ դնել իւր կեանքին։

—

Փետրվարի 19-ին, երկաթուղու առաւօտեան գնացքով, ինչպէս լսել է «Нов. Обоз.» լրագիրը, Կովկասեան կառավարչապետի կարգադրութեամբ, դուրս է գնալու Թիֆլիսից Բեմմերտի նախագահութեամբ մի կօմմիսիա, բաղկացած յայտնի քաղաքային և զինուորական բժիշկներից ու անասնաբոյժներից, սապ կոչուած հիւանդութիւնը հետազօտելու համար, որը երևացել է Քութայիսու նահանգում, ինչպէս անասունների, նոյնպէս և մարդոց մէջ։

—

ԳՕՐՈՒՑ․—Այս քանի օրերս Ցխինվալում մի կօշկակար 15 կոպէկի համար սպանեց իւր ընկերին։ Սպանողը և սպանուողը վրացիք են։ Քննութիւնը սկսուած է․ սպանուածին Գօրի բերեցին և թաղեցին։

—

ՆՈՅՆ ՏԵՂԻՑ․—Գօրու փողոցները շատ անմաքուր են․ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում մաքրութեան վերայ։ Աստուած մի արասցէ եթէ գարնանը տաք օրեր լինին և խօլերան՝ մեզ մօտ հիւր գայ, նա հարիւրաւոր զոհեր կը զանէ։ Շատերի բակերը լի են փտած կաղամբներով և ուրիշ աղբերով․ եթէ տաք օրեր են լինում նրանցից բարձրանում են գոլորշիներ և զանազան ապականուած ու հոտած գազեր։ Հրաւիրում ենք տեղացիներին ուշադրութիւն դարձնել․ մաքրութիւնը կարող է մեզ ազատել զանազան հիւանդութիւններից։

—

ՇՈՒՇՈՒՑ․ Փետ․ սկիզբներում Շուշւոյ գաւառի X գիւղում մի գիւղացի փող է լինում պարտ մի մարդու։ Ժամանակը լրանալուց յետոյ վաշխառուն պահանջում է փողը և պարտապանը լրացնելով իւր պարտքը՝ տալիս է վաշխառուին․ իսկ վերջինս անիրաւաբար կրկնապատկելով իւր փողի տոկոսիքը՝ պահանջում է մի գումար ևս․ խեղճ պարտապանն անկարող լինելով ընդդիմանալու և այլ ևս փող չունենալով վճարել վաշխառուին՝ տալիս է նրան իւր որդին մի տարի ժամանակով ծառայելու անտեղիցս պահանջի փոխարէն, բայց որդին չը կարողանալով տանել վաշխառուի այս անիրաւ վարմունքը՝ ինքնասպանութիւն է գործում խեղդամահով։

Մինչև ե՞րբ պէտք է մեր խեղճ գիւղացիներն անիրաւ վաշխառուների ձեռքում տանջուին և չը կարողանան ծանր տոկոսների տակից գլուխ բարձրացնել։

—

ԱՐՄԵԱՆՍԿԻՑ մեզ խնդրում են հրատարակել․—Արմեանսկի հայոց եկեղեցին կարօտութիւն ունի մի ձայնաւոր դպրի․ եկեղեցին կը տայ նրան 8 ր․, իսկ ժողովուրդը տարեկան արդիւնք կը տայ 250 ր․ կամ աւելի։ Այս պաշտօնը յանձն առնողը թող դիմէ եկեղեցւոյ երեցփոխին այս հասցէով․ Армянскъ. (Тавр. губ.) Клитору Андрею Галаджіеву.

—

ԿՐԱՍՆԱՎՕԴՍԿԻՑ․—Ինչ յունվարի 18-ին ցուրտ քամի եղաւ այն օրուանից մինչ օրս (փետր․ 15) մի պարզ օր չենք տեսնում. այստեղ մինչև օրս չի եղած ցուրտեր է անում և ձիւն է գալիս։ Փետր․ 11-ից մինչ 14-ն անընդհատ ձիւն եկաւ տեղս, այժմս ծածկուած է լեռներն և Կրասնավօդսկու շրջակայքն 8 վերստ ձիւնով։

Միխայելեան ծովածոցն ձեռքերի աշխատութեամբ հազիւ բացուել է և շոգենաւերն մեծ դժուարութեամբ մուտք են գործում։ «Սեվերնի» ընկերութեան «Վիզանտիա» շոգենաւը 300 մարդիկներով հազիւ է կարողացել ծովածոցից դուրս գալ, ինչպէս ասում են այն 300 մարդ լեզգիները, որոնք երկաթուղու ճանապարհի վերայ բանելուց յետ վերադառնալիս են եղել դէպի Բագու, «Վիզանտիա» շոգենա-

---

արհաւիրքները որոնք գործ էին դըրվում նրանց կանանց և օրիորդների վերայ, մինչև անգամ նկարագրութիւնից դուրս էր․ սակայն հուգենոտների կանանց սեռը միշտ գերազանցում էր իւր բարձր բարոյականութեամբ։ Վերջապէս բազմաթիւ ընտանիքներ իրենց բնակարաններից արտաքսվում էին փողոց բոլորովին մերկ դրութեամբ և սաստկապէս արգելուած էր օրէնքի զօրութեամբ այդ «ապստամբներին» ապաստանարան տալ և եթէ հաստատամտութեամբ տանում էին խեղճերը այդ տառապանքները, այն ժամանակ նրանց բանտարկում էին։ Վա՜յ այն բողոքական քահանային որ ընկնում էր նրանց ձեռքը, կամ վա՜յ այն փախստականին որին ձերբակալում էին—նրանք դատապարտվում էին մշտընջենաւոր տաժանակիր աշխատանքի ընդ միշտ շղթայակապ էին անում նրանց կոշտ նստարանների վերայ, իսկ կանայք տառապում էին ամենասոսկալի բանտերում։ 1685 թուին նոր վտանգ ևս վերայ հասաւ—իւրաքանչիւր 5—16 տարեկան պատանին պէտքէ ութ օրուայ մէջ յափշտակուէր իւր ծնողներից․ Նանդի հրովարտակը ոչնչացնելուց յետոյ արդէն, երկու հարիւր քրէական հրովարտակներ հըրատարակուեցան բողոքականների դէմ։

Այս տողերը մէջ եմ բերում ոչ թէ Միշլէից, որը քաղաքագէտ մատենագրի յատուկ եռանդով գեղեցիկ գոյներով նկարագրում է մեզ այդ սարսափելի հալածմանց րոպէները, այլ առնում եմ մի համեստ գերմանական պատմագրից, որը և համարվում է Ֆրանսիայի ամենանոր պատմաբաններից մէկը։

Ահա, այս մասին նոյն իսկ ինչ տեսակ է խօսում մի ժամանակակից, առաքինի անձնաւորութիւն — պաստոր Կլօդը։

«Դրագոնները հազարաւոր հեծկլանքներ սառնասրտութեամբ տանելով, կախաղան էին բարձրացնում ժողովրդին․ արանց և կանանց մազերից կախում էին կամ տան առաստաղներից և կամ հնոցների կլուերից և ծխում էին նրանց թրջած խոտով մինչ այն աստիճան, որքան կարողանում էին տանել նրանք։ Դրագոնները անգթաբար քաղում էին մարդոց մօրուսները և գլխի մազերը, մերկացնում էին բողոքականներին և հազար ու մի գարշելի, անասուն վարմունքից յետոյ, նրանց ամբողջ մարմինները ծակծկում էին գնդասեղով։ Դրագոնները ստիպում էին բողոքականներին եօթ, ութ օրերով անքուն մնալ, մինչև անգամ հերթով պահպանութիւն էին անում նրանց աչքերին և չէին թողնում ծածկուիլը, մինչև որ այն թշուառները բոլորովին ուժաթափ ընկնում էին։ Եթէ նրանց պատահում էին բողոքական հիւանդներ, այնքան խիստ էին զայրանում, որ ժողվում էին 10—12 թմբուկներ և ամբողջ շաբաթների ընթացքում ածում էին նրանց անկողինների մօտ, որպէս զի խօսքի փոխանակութիւն անել չը կարողանան միմեանց հետ։ Չէին խնայում ոչ սեռը, ոչ հասակը, ոչ էլ կոչումը և եթէ հաւատափոխ անելու ժամանակ մի որևէ ընդդիմութեան էին հանդիպում, այնուհետև միևնոյն բռնութիւնները գործ էին դնում»։

Այս բոլորը, ինչ որ մենք խօսեցինք և հատուածներով մէջ բերինք, մեզ պատկերացնում են, և այն էլ շատ թոյլ կերպով, այն տառապանքները որոնք հետևեցին Նանդի հրովարտակը բառնալուց յետոյ։ Այս ազգի ազգի տառապանքները և բռնութիւնները անհաշիւ են և դրանց հետ չէ կարելի համեմատել ֆրանսիական վերջին պատմութեան այն մռայլ տեսարանները, որոնց թիւը պակաս չէր նոյն իսկ մեծ յեղափոխութեան ժամանակ, յունիսեան օրերին՝ 1848 թուին, երկրորդ կայսրութիւնը հաստատելիս և մեզ աւելի մօտ ժամանակում՝ Կօմունայի և նրա վերջին օրերի ընթացքում։ Գոնէ անցեալ տարուայ վերջերում ներքին խռովութեանց ժամանակ տեղի ունեցած տառապանքները, որը բազմիցս կրկնուել է Ֆրանսիայում, փոքր ի շատէ հասկանալի էր, որովհետև այդ տառապանքները տեղի էին ունենում քաղաքացւոց մէկ մասը միւսի հետ կռուելիս, իսկ ներկայ հանդամանքում ոչ մի ներքին պատերազմ չը կար—այստեղ մի կողմը կանգնած էին միայն խաղաղասէր և իրենց հարց դաւանութեանը հաւատարիմ քաղաքացիք, իսկ հակառակ կողմում—վայրենի հաճոյք և մոլեռանդութիւն, որոնք իրենց դէմ յանդիման ունէին կանգնած ոչ թէ հակառակորդներ, այլ միայն անպաշտպան զոհեր, որոնց մեծամասնութիւնը կազմում էին երեխաները և կանայք։

Սակայն այս հալածանքը, որ մարդկային համբերութեան սահմանից դուրս էր, չէր կարող ամենավատ հետևանքներ չունենալ երկրի վերայ, որքան էլ խստիւ պահպանում էին սահմանագլուխները, որքան էլ ծանր լինէին պատիժները այն անհատների համար, որոնք փորձ էին փորձում թողնել հայրենիքը, սակայն յաջողուեցաւ շատ քաղաքացիների թողնել Ֆրանսիան, քաղաքացիներ, որոնց ցանկութիւնն էր իրենց հայրերի հաւատը պահպանել։

—Հուգենոտները տասնեակ հազարներով փախչում էին ամենայն ուղղութեամբ, ոմանք Շվեցարիա, Հոլանդիա, Անգլիա, ոմանք էլ Շվէցիա, Դանիմարկ, Բրանդէնբուրգ և Ամերիկա։ Նրանց ամեն տեղ գրկաբաց ընդունում էին և հասկանալի է, որովհետև այդ փախստականները իրենց կրթութեամբ, աշխատասիրութեամբ, բարոյականութեամբ, հարստութեամբ և եռանդով ֆրանսիական ժողովրդի ծաղիկներն էին համարվում։ Այն կորուստը, որ ունեցաւ Ֆրանսիան ոչ միայն ներկայի վերաբերութեամբ այլ և ապագայի անկարելի է մի առ մի համարել, նրա (Ֆրանսիա) վաճառականութեանը և արդիւնաբերութեանը անուղղելի հարուած տրուեցաւ, նրա բոլոր քաղաքները դատարկուեցան, բոլոր մտաւոր և նիւթական գործունէութեան ճիւղերը կորցրին իրենց ամենալաւ և ամենաընդունակ ույժերը։ Ահագին դրամագլուխներ Ֆրանսիայից անցան արտասահման և այնուհետև Եւրոպայի զանազան տեղերում հիմնուեցան արդիւնաբերական ճիւղեր, որոնք մի փոքր առաջ Ֆրանսիայի միայն և եթ հարստութիւնն էին կազմում։ Առաջին անգամները այս հայրենիքից փախուստ տուող Հուգենոտների թիւը հաշվում էին երկու հարիւր հազար, իսկ ներկայ նոր հետազօտութիւններից երևում է, որ այդ գաղթականների թիւը հասել է երեք հարիւր հազարի։

Թէ այդ հալածանքից ինչ բարոյական և քաղաքական կորուստներ ունեցաւ Ֆրանսիան, այդ ցոյց տուեց նրա վերջին պատմութիւնը․ այդ կորուստները ամեն կերպ զգալի եղան հարիւր տարի անցնելուց յետոյ և մինչև անգամ մեր օրերում Նանդի հրովարտակի ոչնչանալը չէ դադարում հանդէս բերել դառը պտուղներ Հուգենոտների նախնի հայրենիքի համար։ Այն տօնախմբութիւնը, որ կազմել էին այս օրերս (հոկտեմբերի 29-ին նոր տոմարով) քսան հազար Հուգենոտների սերունդները Բերլինում և որոնք ապաստանարան էին գտել Բրանդէնբուրգում, կարող է մի տեսակ պատկերանկար համարել վերոյիշեալ տխուր անցքերի։

(Կը շարունակուի)

ւը նրանց տարել է ձրի մինչև Բագու, միմիայն այն պայմանով որ նրանք ծովածածուցումն սառուց կոտրատեն որ կարողանայ նաւը դուրս գալ։

Երկու օր 20 վերստ տարածութեամբ սառուց կոտրելուց յետոյ յաջողուել է դուրս գալ Կասպեան ծովը։ Նոյն օրինակին հետևել է և «Լեբեդ» ընկ. «Արտելչիկ» բարկազը որը 4 օր բաւականի բանուորներով չարչարուելուց յետոյ հասաւ Կրասնավոդսկ։

Այժմ փոքր ինչ հեշտութեամբ են մուտք գործում Միխայլեան ծոցն, իսկ նոր գտած ծոցն, որ մատչուութիւն կայ այնտեղից երկաթուղի շինելու, դեռ ծածկուած է 6 վերշոկից աւել հաստութեան սառուցով։

Օրերումս մի Թուրքմէն իւր նաւակով տեղից մի Թիւրք վաճառականի 100 քսակ ալիւր է բարձում որ տանէ Միխ. ծոցն, ճանապարհին անյաջող քամիների հանդիպելով մնում է «Բառւ» անուանեալ կղզու մօտ, և այնտեղ սառուցի հանդիպելով՝ սառուցը խորտակում է Թիւրքմէնի նաւակը, և ալիւրն ու նաւակն խորասուզվում են ջրի մէջ, իսկ բանուորներին ազատում են մերձակայ մեծ նաւերն, որոնք Աստրախանից երկաթուղու համար չպալ և բեռ են բերած, իսկ սառոյցի պատճառով մնացած են այնտեղ։

—

Ներկայ տարւոյս ամրանը ինչպէս հաղորդում է «Рук. Кур.» լրագիրը, մի քանի լեռնային երկրաչափներ պարաստութիւն են տեսնում գնալ Կովկաս այն նպատակով, որ հետազօտեն այնտեղի նորագիւտ մարգանցի հանքը։ Որովհետև մարգանցի հանքը շատ է նպաստում զանազան տեսակ գործուածքներին և հիւսուածքներին սպիտակ գոյն տալուն, ուստի և այդ նպատակով կազմվում է վերոյիշեալ երկրաչափների ընկերութիւնը։ Այդ հանքից շատ գտնուած է Թիֆլիսի նահանգում և նրան մշակելու ձեռք կը զարկեն առաջիկայ տարուայ ամրանը։

—

Թիֆլիսի հրապարակի վերայ փետր. 16-ից մինչև մարտի 1-ը կենսական մթերքները վաճառվում են հետևեալ գներով. Թխած հաց ալիւրից փութը՝ 5 կ., ցորենի ալիւրից 1-ին տես. փութը՝ $2^1/_2$ կ., 2-րդ տես. փ. 2 կ., միևնոյն ալիւրից տեղական Թոնիրներում Թխած 1-ին տես. փ. $4^1/_2$ կ., 2-րդ տես. փ. 3 կ., 3-րդ տես. փ. $2^1/_2$ կոպ. լաւաշի 1-ին տես. փ. $4^1/_2$ կ., 2-րդ տես. փ. $3^1/_2$ 3-րդ տես. փ. 3 կոպէկ։ Տաւարի մսի փ. 1-ին տես. փ. 8 կ., 2-րդ տես. փ. 7 կ., սուկին 14 կ., ոչխարի մսի փ. 9 կ., խոզի մսի փ. 1-ին տես. 6 կ., 2-րդ տես. փ. 5 կոպէկ։

ԳԻՒՂԱԿԱՆ-ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ *)

1880 թ. փետրվարի 26-րդ օրը ընդ միշտ նշանաւոր օր պիտի համարուի կովկասի բժշկական պատմութեան մէջ։ Ինչպէս յայտնի է, այդ օրը Բարձրագոյն հաստատութիւն ստացաւ Անդրկովկասեան նահանգների մէջ գիւղական բնակիչներին բժշկական օգնութիւն տալու օրէնքը, որի ծրագիրը մշակել է Կովկասեան բժշկական վարչութեան կառավարիչ բժշկապետ Ռեմմերտը։

Ինչ ասել կուզէ, որ չինական ազգաբնակութիւնը, որ պետութեան հարկակիր ույժերի գլխաւոր աղբիւրն է, վաղուց կարօտութիւն ունէր այդ տեսակ օրէնսդրութեան, որի նպատակն է,—հասարակաց առողջութեան հոգսը, չինական դասակարգի տնտեսական-առողջապահական դրութեան ուսումնասիրութիւնը և ճիշտ գաղափար ունենալը և վերջապէս պատահական տկարութիւնների և տարափոխիկ ախտերի ժամանակ էական և ոչ թէ ձեւական և երևակայական օգնութիւն հասցնելը։

Այս օրէնսդրութեան խորին նշանակութիւնն իմանալու համար հարկաւոր է մի Թռուցիկ հայեացք դարձնել այն վիճակի վերայ, որի մէջ գտնվում է չինական ազգաբնակութիւնը մանաւոր տկարութիւնների կամ տարափոխիկ ախտերի ժամանակ։ Այս վիճակը վերին աստիճանի աղետալի է և յուսահատ։ Գիւղացին մի կողմից կրում է տարափոխիկ ախտերի պատճառած աղետի անտանելի ծանրութիւնը,—նուաղում է սպառում ֆիզիքապէս և տնտեսապէս, վաղահաս մահուան մանգաղին զոհեր տալով, միւս կողմից հարստահարվում է զանազան խաբեբաների ձեռքին, որոնք անդադար չորհ են բերում մեզ մօտ դրացի Պարսկաստանից և մոբեխի նման գիւղական և գռեհկի ջանին են ընկնում։

Գաւառական, ուրեմն չինական ազգաբնակութեան բժշկական-առողջապահական հոգացողութիւնը օրէնքով դրուած է գաւառական բժիշկների վերայ։ Բացի այն, որ ընդարձակ տարածութեան վերայ մի բժիշկ կայ, նա և ծանրաբեռնուած է այնպիսի բազմաբարդ, բայց հասարակաց առողջութեան խնդրի հետ ոչինչ յարաբերութիւն չունեցող պաշտօնական զբաղմունքով, որ դրա հարիւրերորդ մասն անգամ բարեխղճութեամբ՝ փութաջանութեամբ կատարել, ո՛ւր մնաց որ օգնութեան հասնել չինականին՝ նրա կարիքի ժամանակ։

Տեղական հանգամանքների պատճառով այս բժիշկների դրութիւնը այնպէս անբնական ու անտանելի է, որ նրանք ակամայ գիտութեան և մարդասիրութեան սպասաւորներից սըլնքոր ձեւապաշտներ ու օրինաքաղներ պիտի դառնային։ Ափսոս որ գրականութիւնը չէ վերստեղծել մեր գաւառական բժշկի տիպարը, որ ոչ քուն ունի և ոչ դադար, այլ անդադար վազվզում է գաւառի ընդարձակ տարածութեան վերայ անթիւ անհամար սպանուած դիակներ ճեղքելու, ինչ է, որ նրանց մահուան պատճառն իմացուի։ Սակայն ով չը գիտէ, որ մինչև գաւառական բժշկի գալը այդ դիակները այնքան նեխուած ու ապականուած են լինում, որ ամենագէտ սատանան անգամ կարող չէ մահուան պատճառն իմանալ։

Չէ կարելի ասել, որ մեզանում բժիշկների պակասութիւն կայ, այն ևս հմուտ բժիշկների, որոնք բարձր են կրում իրենց գիտութեան և կոչման դրօշակը։ Չէ բժիշկներ շատ կան, դուցէ և շատ տեղերում պահանջից շատ են։ Բայց դժբաղդութիւնը այն է, որ այդ բժիշկները անկանոն կերպով խռնուած են կեդրոնի տեղերում։ Նրանք խուսափում են գաւառական մթին խորշերից, որովհետև կարող չեն ասպարէզ գտնել գործունէութեան և իրենց բարձր կոչման պաշտօնը կատարելու համար՝ չինական ազգաբնակութեան մէջ։

Ցգիտութեան ամենաթանձր խաւարը, նիւթական անասելի զրկանքները՝ մտաւոր բարոյական սնունդի բացակայութեան հետ, և վերջապէս առաջանալու յոյսերի պակասութիւնը, այս բոլորը միասին՝ սպառում ու արմատախիլ են անում բժշկի մէջ ձգտումները դէպի բարձրը, վսեմը և առաքինին։ Իրական կեանքը իւր անտանելի ծանրութեամբ ճնշում է այն բոլոր իդէալները, որոնցով ոգեւորված էր այդ բժիշկը համալսարանում ուսանողութեան ժամանակ։ Որքան գրաւիչ և կախարդող ույժ կայ «ուսանող-բժիշկ» խօսքի մէջ։ Բայց որքան մեծ տարբերութիւն՝ այդ սիրուն անունը կրողի բանաստեղծական իղձերի և «գաւառական բժիշկ» կոչուած օրինաքաջ պաշտօնեայի հետևակ ձգտումների մէջ։ Տէր Աստուած, սա ինչ սարսափելի գոյափոխութիւն է։ Ինչպիսի տգեղ կերպով այլանդակում է մարդին գաւառի մութ ու խաւար խորշերում ապրելը։ Եւ յիրաւի, կայ արդեօք մի մասնագիտութիւն, որ բժշկութեան չափ իւր պաշտօնեայից պահանջէր պարբերաբար թարմանալ լրացնել իւր մտաւոր պաշարը, կատարելագործուել այդ արհեստի նորանոր գիւտերի և տեսութիւնների մէջ, որ կարելի է մի միայն ձեռք բերել մտաւոր կեանքի կենդրոններում, համալսարանական քաղաքներում։

Անիրաւ ու անարդար բան է պահանջել, որ բաղտի բերմամբ և պաշտօնի հարկով մեր գաւառների խուլ ու խաւար խորշերում ընկած բժիշկը հետևէ իւր գիտութեան յառաջադիմութեան, տեղեակ լինի նրա վերջին խօսքին, մինչդեռ նրանց դրութիւնը չոփերի վիճակից՝ անգամ բարձր չէ, մինչդեռ նա զրկուած է բարոյական խթանից, որ սովորաբար մղում է մարդին դէպի ներգործական և արգասաւոր գործունէութիւն...Այս կողմից զինուորական բժիշկների վիճակը հազարապատիկ նախանձելի է քաղաքացիական պաշտօնեայ բժիշկներից։

Պետութեան ծառայութեան մէջ աստիճանաբար բարձրանալու ասպարէզը առաջինների համար բաց է և արձակ։ Նրանց համար ստեղծուած են գիտութեան անունով մրցելու պայմանները։ Այստեղ մտաւոր աշխատութիւնը և ջանքը գնահատվում է, ունի միջոց և քաջալերութիւն։

Բայց քաղաքացիական բժիշկը ինչ ունի։

Բժշկի գործունէութիւնը մեծ մասամբ կապուած է նիւթական միջոցների հետ։ Իւր կոչման պաշտօնը և պարտքը յաջողութեամբ կատարելու համար, նա միշտ դեղերի ու գործիքների անհրաժեշտ կարիքն ունի։ Սակայն ունի՞ն արդեօք մեր գաւառական բժիշկները այն միջոցները, որոնցով կարող լինեն օգնել և բժշկել հիւանդներին։ Սարերը տեղից շարժելու զօրութիւն ունեցող հաւատքը միմիայն կարող է կատարել այն, ինչ որ սովորաբար պահանջվում է գաւառական բժշկից կատարել։ Օրինակ գնալ այս ինչ կամ այն ինչ գիւղը կամ վրանաբնակների մօտ, միջոցներ գործ դնել երևցած տարափոխիկ ախտի առաջըն առնելու (վարկցաւ, բկացաւ, կարմրուկ, ծաղիկ, թանք, եղիպտակեղ և ուրիշ ժանտախտներ, որոնց անունը լէգէօնէ) և օգնութիւն տալ ու ապաքինել ախտաժետներին։ Լաւ է՝ գնալ. մի դժուարութիւն չը կայ, բժիշկը սովոր է ձիուց վայր չը գալ։ Բայց ինչով գնալ, որ օրինաք սահմանեալ և գիտութեամբ վկայեալ միջոցները գործադրուին և օգնութիւն հասնի հիւանդին.—Ոչինչով, դատարկ ձեռներով։ Ուղիղ չէ, որ այս դրութիւնը շատ ծիծաղելի կը համարուէր, եթէ այնքան ողբալի չը լինէր։

Շնորհիւ գիւղա-բժշկական նոր օրէնքի հիմնական սկզբունքներին, պէտք է յուսալ, որ այդ օրէնքը այսուհետև մեր գաւառական բժիշկների դրութեան մէջ մի կենդանացուցիչ յեղափոխութիւն կը մտցնէ և նրանց համար բժշկի կոչման արժանաւոր ձգտումներ կստեղծէ։ Եթէ ջանան, որ չը եղծուի այս օրէնքի ոգին և սկզբունքները և աշխատեն պահպանելու այս բարեբեր հիմնարկութեան կանոնաւոր զարգանալու նպաստող պայմանները, անշուշտ Կովկասը ևս շուտով կունենայ քաղաքացիական ծառայութեան բժիշկներ, որոնք պիտի կրեն առանձին, բժշկի կոչումից անմիջապէս ծագումն առնող պաշտօն,—օգնութիւն հասցնել գիւղական ազգաբնակութեան՝ հիւանդութիւնների ժամանակ, քննել, ուսումնասիրել այս հանգամանքները, որոնք թէ այսպէս և թէ այնպէս ազդեցութիւն ունին նրա առողջապահական, հետևաբար և տնտեսական բարեկեցութեան վերայ և վերջապէս համոզել, հասկացնել և արծարծել նրանց մէջ գիտութեան սկզբունքները։ Երբ միանգամ կազատուեն այն ծանր և միևնոյն ժամանակ անօգուտ վաստակից, որ վատնում է գիւղական ազգաբնակութեան առողջապահական շահերին ծառայելու պաշտօն կրող բժիշկների ժամանակը, կարողութիւնը և եռանդը՝ քննական-բժշկական պահանջների վերայ,—այն ժամանակ կարող են իրենց ձիրքը և գիտութիւնը գործադրել այն բանի վերայ, որ ժամանակին չինական հասարակութեան մեծ օգուտ կարող է բերել։ Գիւղական դասակարգի տնտեսական վիճակը բարւոքելու հոգացողութեան մէջ՝ օրէնսդրութեան և կառավարութեան բոլոր ջանքը և ճիգը ի զուր կը լինին և անպտուղ կը մնան, եթէ նախապէս այդ ազգաբնակութիւնը ողջ և առողջ կեանք վայելելու պայմաններով չապահովուի։

Գիւղական-բժշկական օրէնքը թէև հաստատուած էր վեց տարի առաջ, բայց նիւթական միջոցների սղութեան պատճառով՝ մինչև նոր աղբիւրներ գտնելը՝ անորոշ ժամանակով անգործադրելի մնում էր։

Սակայն կարիքը այդ բանի դէմ բողոքում էր։ Տարափոխիկ ախտերը վերջին ժամանակ սաստիկ տարածվում էին։ Գիւղական ազգաբնակութիւնը անօգնական մնացած այս աղէտների մէջ, նուաղում էր և աղքատանում։ Իրերի ընդհանուր վիճակը պահանջում էր, որ շուտով այս օրէնքը գործադրուի։ Եւ յիրաւի երկու տարի է, որ կառավարութիւնը այդ օրէնքի զօրութեամբ՝ մի քանի նահանգներում բաց է արել բժշկական ընդունարաններ, որտեղ ձրի դեղ ու դարման են ստանում հողային հարկ հատուցանող, այսինքն չինական ազգաբնակութիւնը։ Որոշեալ տեղերում հաստատուել են բժշկանոցներ՝ իւրաքանչիւրը չորս մահճով, երկուսը՝ արանց, երկուսը՝ կանանց համար։ Այս ընդունարանները ունին բաւականին հարուստ դեղատուն՝ վիրաբուժական և ապաքինական (տերապեվտիկական) գործիքներով և նիւթերով։

Թէև այս օրէնքի գործադրութիւնը պաշտօնապէս սկսած է 1884 թ. ընթացքում, բայց այդ բոլոր տարին նախապատրաստութեան մէջ անցնելով, իրօք բժշկական ընդունարանների բացուիլը անցեալ 1885 սկզբին պիտի համարել։ Ուրեմն անցեալ տարւայ ընթացքում նորահաստատ հիմնարկութեան պաշտօնեաները պիտի ցոյց տային իրենց գործունէութեան արդիւնքը նոր ասպարէզի վերայ։ Ո՞ր աստիճան դրանք արդարացրին կառավարութեան վստահութիւնը և հասարակութեան ակնկալութիւնները, ո՞ր աստիճանի յարմարութիւն գտան իրենց նոր դրութեան մէջ և ինչպէս որոշեցին այդ կռուանը, որի վերայ կարող է ամրանալ այս նոր հաստատութիւնը և ծաղկել,—ցոյց պիտի տայ նրանց տարեհաշիւը, որ ինչպէս լսում ենք՝ մինչև յունվարի 20-ը պէտք է ներկայացնէին կառավարութեան։

Եթէ ծանօթանանք այդ հաշուի հետ—կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։

ԴԵՐԲԵՆԴԻ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ *)

Գ.

Դերբենդի խաղողները, մանաւանդ սև տեսակները, ինչպէս որ փորձերը մեզ ցոյց տուին և ուրիշները վկայում են, արդարև կարող են լաւ գինի տալ, եթէ վարուելու կերպը իմանանք. բայց դժբաղդաբար գինեգործութիւնը դեռ մեզանում շատ խախուտ հիմք ունի և ժողովրդեան մէջ ոչ մի ձգտում չէ երևում կատարելագործելու։ Դերբենդցիք կարծես թէ հրաշքի են սպասում որ իրենց գինիները մի հռչակ ունենայ և արժէքը բարձրանայ. բայց հրաշքը չէ յայտնվում, գինին նոյնն է ինչ որ տասն տարի սրանից առաջ և արժէքը այնպէս ընկած՝ որ իւր ծախքը հազիւ է հանում։

Դերբենդցու նիւթական դրութիւնը այնպէս է, որ գինին պարզեցրեց թէ չէ [illegible] է ման գալիս որ գլխից հանէ, նրան փող է պէտք այգին փորելու, ջրելու, վազերը կարելու և վերջապէս տան ծախքի համար և երբ այդ մուշտարին չկայ՝ նա յուսահատ է. «մի գինիս առնող չկայ, վայ այսպէս տարին էլ չգայ» ախ ու վայովնա սպասում է այժմ նաւագնացութեան բացուելուն որ գինին ուղարկէ Նիժնու տօնավաճառը։ Գինին գնում է, բայց այնտեղ միայն Դերբենդինը չէ, հազարաւոր տակառներ շար են ընկած և աւելի խնամքով պատրաստուած. իսկ մուշտարին. մուշտարին մի քանի նշանաւոր ֆաբրիկանտներ են որոնք իրենց շահերին համեմատ գնահատում են և նեղի ձգելով՝ հաւաքում իրենց ձեռքը և վերջը երեք գնով ծախում մանր գինեվաճառներին և սրանք ժողովրդին։ Այդ մեծ պարտիայով գնողները ինչպէս երևում է լաւ են հասկացել մանաւանդ դերբենդցիների դրութիւնը—փողի նեղութիւնը և նրանց գինեգործութեան վիճակը։ Յիրաւի գինեձէրի դրութիւնը շատ կրիտիքական է. նա ոչ կարող է բերած ապրանքը յետ տանել և ոչ էլ ույժ ունի մի տարի ևս պահելու, մանաւանդ որ յաջորդ տարին էլ նոյնքան ապրանք ունի և այդքանը պիտի հալեցնէ, բայց մուշտարին Ռուսաստան դարձեալ նոյն անձինքն են մնում. այդտեղ կամայ ակամայ խոնարհվում է նրանց առաջ և աղաչանք պաղատանքով ծախում տուն գալիս։

Այս դրութիւնը ի հարկէ երբէք չէ կարող բարւոքուել, մինչև որ այս երկու գլխաւոր փոփոխութիւնները չը մտցնուին այստեղի գինեգործութեան մէջ. ա) Գինիների կատարելագործելը և Ռուսաստանի ճաշակին յարմար պատրաստելը և բ) Նիժնայում կամ մի այլ կեդրոնում հասարակական պահեստի բաց անելը։

Գինիների կատարելագործելը կարելի է միայն գինեգործութեան տեխնիկական մասի ուսումնասիրութեամբ, այդտեղից ծագում է ըստինքեան գինեգործութեան դպրոցի պահանջը։ Կարելի՞ է արդեօք իրագործել այդ, մենք չենք կասկածում, եթէ միայն կամք կայ, յառաջադիմելու ձգտում կայ։

Բարեխնամ տէրութիւնը ինքը գինեգործութեան և այգեգործութեան դպրոցների բացման վերայ այժմ մեծ ուշադրութիւն է դարձնում, զանազան

---

*) Ծ. ան. Ներկայ յօդուածը թարգմանել ենք Բագու հրատարակուող «Каспій» լրագրից, որի մէջ բժշկական-առողջապահական հարցերին նուիրուած յօդուածներից շատերը «Նոր-Դար»-ի յարգելի աշխատակից բժիշկ Արամեանցի գործն է։ Այս յօդուածը թէև անստորագիր է, բայց տեղիք ունինք մտածելու, որ սա ևս բժիշկ Արամեանցի գրութիւնն է։ Յօդուածի ոճը իրաւունք է տալիս մեզ այսպէս կարծելու։

Տեսնելով սրա մէջ մեր չինական ազգաբնակութեան առողջապահական վիճակի և գաւառական բժիշկների անշօր դրութեան ճշգրիտ նկարագիրը, օգտաւէտ համարեցինք այս յօդուածի թարգմանութիւնը։

Կաշխատենք ծանօթացնել ուրիշ անգամ «Նոր-Դար»-ի ընթերցողներին բժշկի ուրիշ յօդուածների հետ, որոնց հետ բաղդատելով՝ ներկայ գրուածը մի թռուցիկ նկատողութիւն է։

Խմբ.

*) Տես «Նոր-Դար № 12.

արտօնութիւններ տալիս և նիւթականապէս նպաստում։ Չենք կարծում որ Դերբէնդի ժողովրդեան խնդիրը չը յարգուի և այսպիսի մի կեդրոնում ուր աւելի յարմարութիւններ կան և միևնոյն ժամանակ մեծ պահանջ, այդտեսակ մի գործնական դպրոց՝ չը բացուի, որ առաջնորդ լինի հասարակութեան։ Իսկ հասարակական պահեստի բանալով՝ Դերբէնդի գինիները ուղղակի կանցնէին մանր գինեվաճառների ձեռքը և ռուս հասարակութեան աւելի մատչելի լինելով՝ օրէցօր սպառումը շատ կը լինէր։ Այդ ժամանակ մեծ գինեվաճառները այլ ևս այն ճընշումը չէին բանեցնիլ, ինչ որ այժմ և իրենք կը խնդրէին գինետէրերին։ Թէ ինչպէս և ինչ պայմանով կարելի է այդպիսի մի հասարակական կամ մի քանի անձանց ընկերութեամբ մի բացուած սկլադ պահել, գուցէ առիթ կունենանք ուրիշ անգամ խօսելու։

Կ. Կ. Մելիք-Շահնազար.

28 յունվարի 1886

Դերբէնդ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Polit. Corr.» լրագրի ասութեամբ, Թրքական կառավարութիւնը յանձնարարել է Պետերբուրգի Թրքական դեսպան Շակիր-փաշային Թիւրքիայի և բօլղարական իշխանի համաձայնութեան մասին Ռուսիայի կողմից արած նկատողութեանը յայտնել հետևեալը. Ռուսիայի կարծիքով, սուլթանը առանց պետութիւնների համաձայնութեան իրաւունք չունէ իշխան Աlեքսանդրին Արևելեան-Ռումէլիայի գեներալ-նահանգապետութեան կոչումն տալ, որովհետև այդ տեսակ վարմունքը սուլթանի կողմից հակառակ է Բերլինի դաշնագրութեանը։ Բայց դրանից այդ համաձայնութիւնը մի անձնական համաձայնութիւն է իբրև Բատտենբերգեան իշխանի հետ և ոչ թէ բօլղարական իշխանի, Բ. Դուռը Ռուսիայի վերոյիշեալ նկատողութեանը պատասխանում է, թէ նա բացի Ռուսիայից, արդէն ստացել է բոլոր պետութիւնների համաձայնութիւնը, իսկ ինչ վերաբերում է առանձին համաձայնութեանը իշխանի հետ, Բ. Դուռը յարմար է դատում ցոյց տալու, թէ «Բօլղարիայի իշխանի» հետ պայման կապելը կը կորցնէր սուլթանի հեղինակութիւնը Արևելեան-Ռումէլիայում և բացի դրանից բոլորովին կը հակառակէր Բերլինի դաշնագրութեանը։ Յետ այնորիկ իշխան Աlեքսանդրի հետ առանձին պայմանաւորուիլը համաձայն է ռումելական օրգանական կանոնադրութեանը։ Բ. Դուռը յանձնարարեց Շակիր-փաշային յայտնել Ռուսիային նաև, թէ պատերազմական համաձայնութիւնը բոլորովին ուղղած չէ մի որ և է պետութեան դէմ, այլ նրա նպատակն է միայն պահպանել փոխադարձ ներքին անդորրութիւն, որը նոյնպէս հակառակ չէ Բերլինի դաշնագրութեան 16 րդ յօդուածին։

—

«N. F. Presse»-ին Կ. Պօլսից հեռագրում են, թէ Թիւրքիային և Յունաստանին միմեանց հետ հաշտեցնելու և համաձայնելու ջանքերը ոչ մի հետեւանք, արդիւնք չ'ունեցան։ Բ. Դուռը շտապում է ուղարկել Աթէնք իւր նոր դեսպան Ֆերիդամ-Բէյին, ապացուցանելու յոյներին, որ ինքը խաղաղութիւն է ցանկանում և միևնոյն ժամանակ հսկել յունական քաղաքականութեան վերայ։

—

Նոյն լրագրին հեռագրում են միևնոյն տեղից, թէ Թրքական ռազմակիր «Միսունդիէ» նաւը գնաց Դարդանէլ և կ'մնայ այնտեղ յունական նաւատորմիղի յարձակման դէմն առնելու համար։ Թրքական զօրքերը, որոնք մինչև այժմ գտնվում էին Մուստաֆա-փաշայում (բօլղարական սահմանագլուխ) գնում են դէպի Վրանիէ, ուր սերբերը կենդրոնացնում են իրենց ոյժը։

—

«Köln. Zeit.» լրագրին Աթէնքից հեռագրում են թէ յոյները ինչպէս առաջ նոյնպէս և այժմ շարունակում են բանակցութիւններ անել Սերբիայի հետ, որը և տեղիք է տալիս Թիւրքիային կարծելու, թէ Բօլղարիայի և Սերբիայի մէջ հազիւ թէ խաղաղութեան պայմանագրութիւնը կայանայ։

—

Փետրվարի 11-ից (23) Լօնդօնից հեռագրում են, թէ լօրդ-Ռօզբերին խորհուրդ է տուել Բ. Դրանը 'ի նկատի ունենալ Թիւրքիայի և բօլղարական իշխանի մէջ կայացրած համաձայնութեան առթիւ Ռուսիայի կողմից արած առաջարկութիւնը։

—

Նոյն թուով Կ. Պօլսից հեռագրում են, թէ Ալբանիայում գտնուած Թըրքական զօրքի մի մասը մի դաշտային թնդանօթով գնում է դէպի Ելասօն։ Ամեն օր գալիս են Եանին և Պերևզօ բաշիբուզուկների աւազակախմբեր։ Օսման-փաշան հզօր թնդանօթաձիգ զօրքով գնում է դէպի Եանին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շաբթում Ֆրանսիայի Բրէստ քաղաքում «Tulgitit» անունով մի օդապարիկ արձակեցին, որի մէջ նստած էին երևելի օդագնաց Դիւ-Բուա-Կարուսը, երաժշտապետ Նմէ Ժիրարը և Նիւ-Եօրկի մեծ թատրոնի օպերայի երգիչ Ժիւլ-Բէնօն։ Օդապարիկը թողնելուն պէս, իսկոյն բարձրացաւ սաստիկ քամի և սկսեց օդապարիկը երկար ժամանակ տատանել Բրէստի վերայ։ Օդագնացները, տեսնելով վըտանգը, փորձ փորձեցին իջնելու, բայց անհնարին եղաւ, ուստի սկսեցին վայր ձգել նաւակից ծանրութիւնները, որ ազատուեն քամուց։ Այն ժամանակ քամու սաստիկ հոսանքը մղեց օդապարիկը աւելի հեռու դէպի ծովը և անյայտացրեց թշուառ օդագնացներին ընդարձակ օդային տարածութեան մէջ։ Մօտ օրերումս մի ռուսական նաւ տեսել է ծովի վերայ մի օդապարիկի գօնդօլ (նաւակ), որին ալիքները մղում էին դէպի հիւսիս։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 Փետրվարի

ԹԱՇԿԷՆԴ. Կուլջից լուրերը հաղորդում են, թէ Չինաստանում դունգանները մեծ ապստամբութիւն են յարուցել։

ԲՈՒԽԱՐԵՍՏ. Գարաշանինը հեռագրով յայտնեց Միտօվիչին, թէ Սերբիան ընդունեց Թիւրքիայի կողմից առաջարկած խաղաղութեան պայմանի նախագիծը։ Պայմանը կը ստորագրուի վաղը։

ԱԹԷՆՔ. Դելիանիսի մինիստրութիւնը պաշտօնաթող եղաւ, բայց թագաւորը դեռևս չէ ընդունել նրան. յեղափոխական մասնաժողովները անբաւական են կառավարութեան զիջումներ անելուցը և պահանջում են պատերազմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Երեք ամսական դրամարժէքը

Լօնդօն $23^{27}/_{22}$ և $23^{3}/_{4}$
Համբուրգ $202^{5}/_{8}$ $202^{1}/_{8}$
Պարիզ 250, $249^{3}/_{4}$.
Պօլուիմպերիալ 8 ր. 28 կ. սակ.
Մաքս. կուպոն. 8 ր. 27 կ. սակ.
Արծաթ . . . 1 ր. 29 կ. սակ.
Բօրսայլին դիս. $4^{1}/_{2}$ և 6 %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. — կ. սակ.
2-րդ » . . 100 ր. — կ. սակ.
3-րդ » . . 100 ր. — կ. սակ.
4-րդ » . . 100 ր. — կ. սակ.
5-րդ » . . 100 ր. 12 կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. 12 կ. սակ.
2-րդ » . . . 100 ր. 12 կ. սակ.
3-րդ » . . 100 ր. 87 կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . . $230^{1}/_{4}$ ր. սակ.
» » 2-րդ . . 222 ր. սակ.
$5^{1}/_{2}$% րենտեր . . $103^{3}/_{4}$ ր. սակ.
Ոսկէ րենտ. $181^{1}/_{2}$ և 153 ր. սակ.

19 Փետրվարի

ՊԱՐԻԶ, Ֆրէյսինէն յայտնեց պատգամաւորների ժողովում, որ Ֆրանսիան բողոքել է Թիւրք-ռումէլիական սահմանում մաքսային կարգ մտցնելու դէմ, վասն զի դա դէմ է Բերլինեան պայմանագրին և վնասում է Ֆրանսիայի և մի քանի այլ պետութիւնների շահերին։ Ժողովը վճռեց, թէ վստահանում է կառավարութեան եռանդի վերայ և յոյս ունի որ նա պիտի կարողանայ ստիպել յարգելու Բերլինեան պայմանները և պաշտպանելու Ֆրանսիական շահերը։

Խմբագիր հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկազ գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջը։

Վլադիկաւկազից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ։

ՆԱԶԱՐ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ ցաւօք սրտի յայտնում է իւր հօր՝ Վանաց մայր եկեղեցւոյ միաբան ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ մահը, և խնդրում է ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեանը Պօլիցէյսկի փողոց սեպհական տունը փետրվարի 19-ին կէսօրից յետոյ ժամը 4-ին, որտեղից հանգուցեալի մարմինը կը տանուի Վանաց մայր եկեղեցին։ Իսկ փետրվարի 20-ին տեղի կունենայ պատարագը և թաղումն։ Մարմինը կը տանեն Վերայի հանգստարանը։

2—2

1886 Г.

„РАДУГА"

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ

ЛИТЕРАТУРЫ ИСКУССТВА И ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ

Въ трудахъ редакціи примутъ участіе извѣстнѣйшія русскія литературныя силы, какъ-то: Н. С. Лѣсковъ, С. А. Юрьевъ, Н. А. Потѣхинъ, А. Н. Майковъ, И. Ф. Горбуновъ, Д. Д. Минаевъ, Н. А. Чаевъ, Вл. Ив. Немировичъ-Данченко, Д. А. Линевъ, М. К. Іогель, князь Сумбатовъ, П. М. Невѣжинъ, Л. Пальминъ, Н. Чмыревъ, А. А. Плещеевъ, В. Г. Ильменскій А. О. Крюковскій, М. П. Өедоровъ (редакторъ «Новаго Времени»), В. П. Бефани, С. И. Крачъ, С. О. Рокинъ, С. А. Орловъ, А. М. Дмитріевъ, Д. С. Дмитрьевъ, П. Леонтьевъ, Е. Михайлова, Л. Ретюнская, П. Бобровъ, Евг. Статкевичъ-Добрыва, В. Александровъ, Leo И., Н. Чалхушьянъ, и мн. др.

Въ портфелѣ редакціи для помѣщенія въ журналѣ въ 1886 г. имѣются слѣдующія литературныя произведенія:

„БАРОНЕССА БРОКЪ",
Большая повѣсть изъ уголовной жизни, Д. А. ЛИНЕВА;

„ИДЕАЛЫ ЛЮБВИ",
ВЛ. ИВ. НЕМИРОВИЧА-ДАНЧЕНКО;

„ВЕЛИКОСВѢТСКАЯ БАРЫШНЯ",
(изъ дневника офицера), ЕВГ. СТАТКЕВИЧЪ-ДОБРЫВОЙ;

„ГОЛЫТЬБА",
историческая повѣсть изъ временъ Стеньки Разина, С. А. ОРЛОВА;

„ЛИХОДѢЙКА-МАЧИХА",
новгородское преданіе, Д. С. ДМИТРІЕВА;

„ИРОНІЯ СУДБЫ",
романъ Л. РЕТЮНСКОЙ;

„ИДОЛОПОКЛОННИКИ",
романъ Е. МИХАЙЛОВОЙ;

Всѣ вышепаз. сочиненія оригинальныя и затрогиваютъ всецѣло русскую жизнь.

ДРАМАТИЧЕСКІЯ СОЧИНЕНІЯ:

„БАЛОВЕНЪ",
комедія въ 4-хъ дѣйствіяхъ. Виктора Александрова (КРЫЛОВА);

„СОКОЛЫ и ВОРОНЫ",
драма въ 5 дѣйств., князя А. СУМБАТОВА;

„НА ЖИЗНЕННОМЪ ПИРУ",
драма въ 4 дѣйств., В. АЛЕКСАНДРОВА;

„ПѢСНЯ ГОРЯ",
драма въ 3 дѣйств., В. АЛЕКСАНДРОВА;

„НА ВСѢ ЧЕТЫРЕ СТОРОНЫ",
комедія въ 4 дѣйст., Д. А; МАНСФЕЛЬДА;

«СЦЕНКИ ИЗЪ АРМЯНСКАГО БЫТА»
Для чтенія въ антрактахъ и дивертисментѣ Н ГАРИНА;

а также будутъ помѣщены тѣ адноактныя піесы, которыя удостоены преміи на конкурсѣ драматическихъ сочиненій, учрежденномъ редакціей «Радуги» въ минувшемъ году, судьями которыхъ состояли: С. А. Юрьевъ, Н. А. Чаевъ, кн. А. Сумбатовъ, П. М. Невѣжинъ, В. А. Крыловъ, Вл. И. Немировичъ-Данченко и Д. А. Мансфельдъ.

ВЪ МУЗЫКАЛЬНОМЪ ОТДѢЛѢ

будутъ помѣщены оригинальныя сочиненія: Альфредъ Грюнфельдъ, Іоаннъ Штрауса, К. Миллэкеръ, Э. О. Вивьенъ, П. А. Щуровскаго, А. Герцберга, Я. Ө. Пригожаго, Ф. Неве и мног. друг. извѣстныхъ русскихъ и иностранныхъ композиторовъ.

ГОДОВОЙ ТОМЪ „РАДУГИ" СОСТОИТЪ ИЗЪ

50 №№ иллюстрированнаго журнала «Радуга».
25 №№ приложенія «Сцена» драмат. искусство.
25 №№ » «Аккордъ» музыкальныя новости.
25 №№ » «Ноты» до 40 піесъ въ годъ.
12 №№ » «Салонъ» органъ обществ. увеселеній.
12 №№ » «Парижскія моды».

1 художественный стѣнной календарь въ 10 красокъ.

1 главная премія большая хромо-олеографія

ЮДИѲЬ

ХУДОЖНИКА Н. ЗИХЕЛЯ.

Не преувеличивая мы смѣло можемъ сказать, что подобную великолѣпную премію до сихъ поръ не далъ еще ни одинъ еженедѣльный иллюстрированный журналъ, въ чемъ легко обѣдиться, такъ какъ картина «Юдиѳь» выставлена въ конторѣ редакціи «Радуги», во многихъ магазинахъ Россіи и кромѣ того, въ кіоскахъ на Невскомъ проспектѣ въ С.-Петербургѣ.

Картина эта превосходитъ самыя смѣлыя ожиданія, что подтверждено самыми лестными отзывами многихъ органовъ столичной и провинціальной прессы.

ПОДПИСНАЯ ЦѢНА

на «Радугу» со всѣми безплатными приложеніями и преміями съ доставкою и пересылкою во все города Россійской Имперіи

на 1 годъ 5 руб.
на ½ года: 3 руб.

ЗАГРАНИЦУ:
на 1 годъ 7 руб.
на ½ года 4 руб.

Допускается разсрочка подписныхъ денегъ: при подпискѣ 2 руб., затѣмъ 3 мѣсяца къ ряду по 1 рублю.

Подписка принимаются во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ Россіи: С.-Петербургѣ въ отдѣленіяхъ конторы: 1) у Фену и К.° на Невскомъ проспектѣ: 2) у Ф. Петрикъ Невскій пр. № 8.

Гг. иногородные подписчики адресуютъ прямо въ Москву въ редакцію журнала «Радуга».

Редакторъ Д А. МАНСФЕЛЬДЪ. Издатель Л. МЕТЦЛЬ

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го Февраля 1886 г. Տպարան Մ. Դ. Ռօտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-° Гол. пр., д. № 41.